ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծ 4, հեռ.՝ (+374 60) 830 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ //www.competition.am

«13» 09 20 22թ.
No 00.5360

«ՆԱՏՈՒՌԱԼ ՖՈՒԴՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ԱՐՏՈՒՇ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ
(հասցե՝ ք. Երևան, Արաբկիր, Հակոբ Հակոբյան 10/57)

Հարգելի՛ պարոն Գալստյան,

Կից ուղարկվում է Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի 2022 թվականի սեպտեմբերի 8-ի ««Գրտնակ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը և ֆիզիկական անձ Միքայել Ռաֆայելի Գյուլասարյանին թիվ ՀԳ-01469/22 վարույթով շահագրգիռ անձ ճանաչելու մասին» թիվ 325-Ա որոշման պատճենը:

Առդիր՝ «2» թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՓՈԽԱՐԻՆՈՂ ԴԱՎԻԹ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատարող՝ Արա Աբգարյան
Անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչություն
Հեռ. (+374 60) 830-840 (236)

competition.am կայքում հրապարակման օրը՝ 9 նոյեմբերի 2022 թվական:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

8 սեպտեմբերի 2022 թվականի թիվ 325-Ա

«ԳՐՏՆԱԿ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ ՄԻՔԱՅԵԼ ՌԱՖԱՅԵԼԻ ԳՅՈՒԼԱՍԱՐՅԱՆԻՆ ԹԻՎ ՀԳ-01469/22 ՎԱՐՈՒՅԹՈՎ ՇԱՀԱԳՐԳԻՌ ԱՆՁ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2022 թվականի սեպտեմբերի 8-ի նիստում, քննարկելով «Գրտնակ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը և ֆիզիկական անձ Միքայել Ռաֆայելի Գյուլասարյանին (այսուհետ միասին նաև՝ **Հաղորդում ներկայացրած անձինք**) թիվ ՀԳ-01469/22 վարույթով (այսուհետ նաև՝ **Վարույթ**) շահագրգիռ անձ ճանաչելու մասին միջնորդությունը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Հանձնաժողովը 2022 թվականի հուլիսի 19-ին ««Նատուռալ ֆուդս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 261-Ա որոշմամբ հարուցել է Վարույթ:

Հաղորդում ներկայացրած անձինք 2022 թվականի սեպտեմբերի 2-ին Հանձնաժողով են ներկայացրել իրենց շահագրգիռ անձ ճանաչելու մասին միջնորդություն:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**) 74-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ շահագրգիռ է այն անձը, որի իրավունքներն իրավախախտման հետևանքով անմիջականորեն խախտվել են: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ անձը շահագրգիռ է ճանաչվում իր միջնորդության հիման վրա Հանձնաժողովի ընդունած՝ նրան շահագրգիռ անձ ճանաչելու մասին որոշմամբ:

Տվյալ պարագայում Վարույթը հարուցվել է «Գրտնակ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, նրա գործունեության և առաջարկած

ապրանքների նկատմամբ շփոթության առաջացման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության փաստի հիմքով: Միաժամանակ «Գրտնակ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից լիցենզային պայմանագրով օգտագործվող ապրանքային նշանի իրավատերն է հանդիսանում ֆիզիկական անձ Միքայել Ռաֆայելի Գյուլասարյանը, ուստի Վարույթի շրջանակներում քննարկվող իրավախախտմամբ կարող են անմիջականորեն խախտված լինել «Գրտնակ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և ֆիզիկական անձ Միքայել Ռաֆայելի Գյուլասարյանի իրավունքները:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 74-րդ հոդվածի 4-րդ մասով, 42-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Գրտնակ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը և ֆիզիկական անձ Միքայել Ռաֆայելի Գյուլասարյանին ճանաչել թիվ ՀԳ-01469/22 վարույթով շահագրգիռ անձ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՆԱԽԱԳԱՀ Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2022 թ. սեպտեմբերի 9
Երևան